(+374) 93 555 656
(+374) 94 226 672
Գյումրի, Վարպետաց փող., 101
zanantaraz@gmail.com

Հարգելի պրն Բալասանյան,

Նպատակ ունենալով Գյումրի քաղաքում արդիականացնել ազգային տարազը և Գյումրվա արհեստագործական ավանդույթները, ակնկալում ենք Ձեր աջակցությունը Վարպետաց 101 հասցեում գտնվող Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանի նկուղային տարածքից 60,6 մ² հատկացնել "Զանան" ՍՊԸ մշակութային կենտրոնին:

"Զանան" մշակութային կենտրոնի ծրագրի իրականացումը Գյումրի քաղաքի համար ունի կարևոր նշանակություն, քանի որ ուղղված է հետևյալ հիմնական նպատակներին.

- ✔ Ավանդական արհեստների պահպանում և տարածում,
- ✔ Երիտասարդների ներգրավվածություն արհեստների ուսուցման բնագավառում,
- ✔ Կիրառական արվեստի միջոցով տեղական արտադրության խթանում,
- ✔ Վարպետաց դասեր, ազգային տարազի ցուցադրություններ,
- ✔ Զբոսաշրջության զարգացմանը նպաստ Գյումրիում:

"Զանան" մշակութային կենտրոնում պարբերաբար կազմակերպվելու են մշակութային միջոցառումներ՝ արվեստի և արհեստի վարպետների անհատական ցուցահանդեսներ, վարպետաց-դասեր, ազգային տարազի ցուցադրություններ: Կենտրոնում գործելու է ազգային տարազներով լուսանկարման սրահը, Գյումրու վարպետների կողմից պատրաստված հուշանվերների ցուցասրահը:

"Զանան" ՍՊԸ մշակութային կենտրոնի գործունեությունը կնպաստի Գյումրի քաղաքում զբոսաշրջության աճին, որը ըստ ՀՀ կառավարության քաղաքականության հանդիսանում է համայնքային զարգացման գերակա ոլորտներից, կբերի թանգարանների առավել հանրաճանաչմանը և այցելուների թվի ավելացմանը:

<<Զանան>> ՍՊԸ վերոհիշյալ նպատակների իրականացման համար պատրաստ է պատշաճ վարձավճարի սահմանման նախապայմանով կնքել գույքի օգտագործման պայմանագիր:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով

"ԶԱՆԱՆ" ՍՊԸ

Գործադիր տնօրեն Մանե Մկրտչյան

23.09.2019թ.
ք.Գյումրի